ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

27 մայիսի 2011 թ. թիվ 5/1667/

12. ՀՀ ԳԱԱ նախագահի ընտրության կարգի մասին

ՀՀ ԳԱԱ Նախագահությունը որոշեց.

Հաստատել ՀՀ ԳԱԱ նախագահի ընտրության կարգը :

ՀՀ ԳԱԱ ՆԱԽԱԳԱՀ Ռ.Մ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ-ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ.Հ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

2011 թ. մայիսի 27 -ի
թիվ 5/1667/ ՀՀ ԳԱԱ նախագահության
որոշմամբ

ԿԱՐԳ

ՀՀ ԳԱԱ նախագահի ընտրության

ՀՀ ԳԱԱ-ի նախագահի ընտրությունները իրականացվում են ՀՀ ԳԱԱ Կանոնադրության 61-րդ կետի հիման վրա ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովի կողմից, որին վճռական ձայնի իրավունքով մասնակցում են ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսները , թղթակից անդամները և ՀՀ ԳԱԱ համակարգի կազմակերպությունների լիազոր ներկայացուցիչները (ՀՀ ԳԱԱ Կանոնադրության 46-րդ կետ)։ ՀՀ ԳԱԱ արտասահմանյան և պատվավոր անդամները և ՀՀ ԳԱԱ-ի համակարգի կազմակերպությունների տնօրենները, որոնք չեն հանդիսանում կազմակերպությունների լիազոր ներկայացուցիչներ, կարող են մասնակցել ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովի աշխատանքներին խորհրդակցական ձայնի իրավունքով (ՀՀ ԳԱԱ Կանոնադրության 47-րդ կետ)։

ՀՀ ԳԱԱ Ընդհանուր ժողովն իրավազոր է, եթե ժողովին ներկա է անդամների առնվազն երկու երրորդը (ՀՀ ԳԱԱ կանոնադրության 49-րդ կետ)։

ՀՀ ԳԱԱ նախագահի ընտրությունները ընթանում են հետևյալ ընթացակարգով։

1. ՀՀ ԳԱԱ նախագահի ընտրությանը նվիրված ընդհանուր ժողովի անցկացման ժամկետը որոշում է ՀՀ ԳԱԱ նախագահությունը ոչ ուշ, քան ընտրություններից մեկ ամիս առաջ։

2. ՀՀ ԳԱԱ նախագահը ընտրվում է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներից ՀՀ ԳԱԱ Ընդհանուր ժողովի կողմից առաջադրված թեկնածուներից (ՀՀ ԳԱԱ կանոնադրության 61-րդ կետ)։

3. ՀՀ ԳԱԱ նախագահի ընտրությունները կատարվում են փակ քվեարկությամբ։ Ընտրված է համարվում այն թեկնածուն, որը ստացել է առավելագույն թվով ձայներ, բայց ոչ պակաս, քան ընտրությանը մասնակցողների ձայների պարզ մեծամասնությունը։

ՀՀ ԳԱԱ նախագահի պաշտոնի համար առաջադրված մեկից ավելի թեկնածուների դեպքում ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովի մասնակիցները պետք է քվեարկեն միայն մեկ թեկնածուի օգտին

4. Եթե առաջադրված է մեկ թեկնածություն , ապա անց է կացվում քվեարկության մեկ փուլ:

Եթե առաաջադրված են մեկից ավելի թեկնածուներ և առաջին փուլում թեկնածուներից և ոչ մեկը չի ընտրվում, ապա անց է կացվում քվեարկության երկրորդ փուլը, որում քվեաթերթիկի մեջ ընդգրկվում է առավելագույն ձայներ / բայց ոչ պակաս, քան ձայների ընդհանուր թվի մեկ քառորդը/ ստացած թեկնածուն: Եթե քվեարկության երկրորդ փուլում այդ թեկնածուն չի ընտրվում, ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովի որոշմամբ նշանակվում է նոր ընտրություններ անցկացնելու ժամկետը:

Եթե առաջին փուլում երկու կամ ավելի թեկնածուներ ստացել են առավելագույն հավասար ձայներ/ բայց ոչ պակաս, քան ձայների ընդհանուր թվի մեկ քառորդը/, ապա երկրորդ փուլի քվեաթերթիկի մեջ ընդգրկվում են բոլոր այդ թեկնածուները: Եթե երկրորդ փուլում այդ թեկնածուներից ոչ մեկը չի ընտրվում, ապա անց է կացվում քվեարկության երրորդ փուլը:

Քվեարկության երրորդ փուլին մասնակցում է միայն այն թեկնածուն, որը քվեարկության երկրորդ փուլում ստացել է ձայների առավելագույն քանակը /բայց ոչ պակաս քան ձայների ընդհանուր թվի մեկ քառորդը/, կամ առավելագույն /բայց ոչ պակաս քան ձայների ընդհանուր թվի մեկ քառորդը/ հավասար ձայներ ստացած բոլոր թեկնածուները:

5. Եթե թեկնածուն (թեկնածուները) քվեարկության երրորդ փուլում չի (չեն) հավաքում ձայների անհրաժեշտ քանակը, ապա ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովի որոշմամբ նշանակվում է նոր ընտրություններ անցկացնելու ժամկետը (մեկ ամսվա ընթացքում):

6. ՀՀ ԳԱԱ-ի փոխնախագահի և ակադեմիկոս քարտուղարի ընտրությունները կատարվում են ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովում ՀՀ ԳԱԱ նախագահի առաջադրմամբ, ՀՀ Կանոնադրության 63-րդ կետի համաձայն: